ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՈՒ ԹԵՐԹԻԿ

ՁԵՐ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Ի՞ՆՉ Է ՆՇԱՆԱԿՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ:

Քաղաքացիական Իրավունքներ սա այն օրենքն է, որը պաշտպանում է անհատներին խտրականության դեմ: 1964 թվականի Քաղաքացիական Իրավունքների վերաբերյալ փաստաթուղթը, 1973 թվականի Իրավունքների Վերականգնման վերաբերյալ Փաստաթղթի 504 Բաժինը, 1990 թվականի Հաշմանդամ Ամերիկացիների վերաբերյալ Փաստաթուղթը և ֆեդերալ ու նահանգային այլ կիրառելի օրենքներում ասվում է, որ խտրականական վերաբերմունքը օրենքին հակառակ երևույթ է համարվում ֆեդերալ և նահանգային ֆինանսական օգնության ծրագրերից օգտվողների համար:

ՈՒ՞Մ Է ՊԱՇՏՊԱՆՈՒՄ ԱՅՍ ՕՐԵՆՔԸ

Եթե դուք դիմում եք կամ ստանում եք դրամական օժանդակություն, Medi-Cal, Սննդի Դրամանիշեր կամ Սոցիալական Ծառայություններ Լոս Անջելեսի Մարզում, դուք համարվում եք օրենքով պաշտպանված խտրականությունների դեմ օժանդակությունների ծրագրի շրջանակներում և ունեք առանձնահատուկ իրավունքներ.

Դուք իրավունք ունեք ստանալու նույն ծառայությունները, պայմանները և արժանանալու նույն վերաբերմունքին բոլոր դիմորդներին և մասնակիցներին հավասարապես անկախ ձեր ծագումից, գույնից, կրոնական պաշտամունքից, սեռից, ացգային պատկանելությունից (ներառյալ ոչ Անգլերեն լեզվով խոսողները), քաղաքացիական հայացքներից, հաշմանդամությունից, տարիքից կամ ամուսնական կարգավիճակից:
Դուք իրավունք ունեք՝

- օգտվելու թարգմանչական ծառայություններից, եթե դրա կարիքն ունեք օգնություն ստանալու կամ օգնություն ստանալը շարունակելու համար մեզ դիմելիս, և
- որպեսզի ձեր գործով զբաղվող աշխատողը լինի երկլեզու, ով խոսում է ձեր մայրենի լեզվով, եթե դուք խոսում եք հետևյալ լեզուներից մեկով. Հայերեն, Կամբոջերեն, Չինարեն, Անգլերեն, Պարսկերեն, Կորեյերեն, Ռուսերեն, Իսպաներեն, Տագալոգ և Վիետնամերեն, և
- օգտվելու անվճար թարգմանչական ծառայություններից նույնիսկ այն դեպքում, եթե դուք խոսում եք այն լեզվով, որը տարբեր է վերը նշված լեզուներից, և
- հեռաձայնելու վելֆերի գրասենյակ և պահանջելու, որպեսզի ձեզ ուղարկած Անգլերեն լեզվով ծանուցումը թարգմանեն և բացատրեն ձեզ:

ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ

Եթե դուք հավատում եք, որ ձեր նկատմամբ ինչ որ ձևով խտրականական վերաբերմունք է ցուցաբերվել կախված ձեր ազգությունից, գույնից, կրոնական պաշտամունքից, սեռից, ծագումից, քաղաքական հայացքներից, հաշմանդամությունից, տարիքից, ամուսնական կարգավիճակից, եթնիկական խմբից, սեռական կողմնորոշումից կամ այլ գործոնից, ապա դուք կարող եք կատարել ստորև նշված բոլոր գործողությունները կամ դրանցից.

Դուք կարող եք պահանջել, որպեսզի կարողանաք խոսել տվյալ գրասենյակի Մարդու Իրավունքների Պաշտպանի հետ: Նա էլ ձեզ կօգնի տարրալուծել ձեր բողոքը և/կամ կբացատրի ձեր իրավունքները: Ներառյալ կաջակցի ձեց ձեռք բերելու PA 607, «Խտրականության Դեմ Բողոքարկման» ձևը և կօգնի ձեզ այն լրացնելիս: Դուք կարող եք նաև կապնվել Լոս Անջելես Մարզի Հասարակական Սոցիալական Ծառայությունների (DPSS) Ադմինիստրատիվ Գերատեսչության հետ կամ ուղղակի Նահանգային ծառայությունների հետ որոնց հասցեները և հեռախոսի համարները նշված են կողքի սյունակում:

Դուք կարող եք պահանջել հետաքննություն DPSS-ի Քաղաքացիական Իրավունքների և Հաճախորդների Սպասարկման Ծառայությունների Բաժնից բանավոր կամ գրավոր կապնվելով Քաղաքացիական Իրավունքների Միավորման հետ: Դուք կարող եք օգտագործել PA 607 ձևը ձեր բողոքը ձևակերպելու համար: PA 607 ձևը առկա է բոլոր անձանց կամ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների համար պահանջի դեպքում: Դուք ինքներդ կարող եք լրացնել այդ ձևը կամ խնդրել Մարդու Իրավունքների Պաշտպանին, որպեսզի նա լրացնի ձեր փոխարեն: Քաղաքացիական Իրավունքների Միավորումից ձեր բողոքը ստանալուց հետո ձեզ հետ կկապնվեն 20 օրվա ընթացքում լրացուցիչ տեղեկությունների համար: Քաղաքացիական Իրավունքների Բաժինը կհետաքննի ձեր բողոքը և գրավոր կտեղեկացնեն ձեզ իրենց հայտնաբերած փաստերի և որոշման մասին: Եթե դուք համաձայն չեք Մարզի հայտնաբերած փաստերի և որոշման հետ, ապա կարող եք որոշումը բողոքարկել Կալիֆորնիայի Սոցիալական Ծառայությունների Վարչությունում, կամ եթե այն վերաբերվում է նաև Սննդի Դրամանիշերի Ծրագրին՝ դիմելով ԱՄՆ Գյուղատնտեսության Վարչությանը:

Ձեր բողոքը պետք է ձևակերպված և ներկայացված լինի 180 օրվա ընթացքում, սկսած այն օրվանից, երբ դուք հավատում եք, որ ձեր նկատմամբ խտրականություն է ցուցաբերվել:

Դուք կարող եք ձեր բողոքը ներկայացնել հետևյալ Մարզային, Նահանգային և Ֆեդերալ գրասենյակներից մեկին՝ Կալիֆոռնիայի Հասարակական Սոցիալական Ծառայությունների Վարչությանը, ԱՄՆ Գյուղատնտեսության Վարչությանը կամ ԱՄՆ-ի Առողջապահական և Մարդասիրական Ծառայությունների Վարչությանը:

County Office
Department of Public Social Services
Civil Rights Section
12860 Crossroads Parkway South
City of Industry, California 91746
Telephone No. : (562) 908-8501

State Office
California Department of Social Services
Civil Rights Bureau
744 "P" Street, M-S. 8-16-70
Sacramento, California 95814
Telephone No. : (866) 741-6241

Federal Office
U.S. Department of Health and Human Services
Office for Civil Rights
907th Street, Suite 4-100
San Francisco, California 94102
Telephone No. : (800) 368-1019

Food Stamp Program
U. S. Department of Agriculture
Food and Nutrition Services
Office of Civil Rights - Western Region
907th Street, Suite 10-100
San Francisco, California 94108
Telephone No. : (888) 271-5983

ՆԱՀԱՆԳԱՅԻՆ ՈՒՆԿՆԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ
ՀՐԱՀԱՆԳՆԵՐԸ ՀԵՏԵՎԻ ԿՈՂՄՈՒՄ

(REVERSE SIDE)

ՆԱՀԱՆԳԱՅԻՆ ՈՒՆԿՆԴՐՈՒԹՅՈՒՆ

Եթե դուք հետագայում էլ օգնության կարիք կունենաք՝ օժանդակության համար ձեր դիմումի կամ հասարակական օժանդակության նպաստների հետ կապված մարզի գործողությունների վերաբերյալ, ապա դուք կարող եք կատարել հետևյալ գործողությունները.

Պահանջել Ունկնդրություն Նահանգի մակարդակով մարզի կողմից կատարված գործողության օրվանից սկսած 90 օրվա ընթացքում: 90 օր ժամանակահատվածը ուժի մեջ է նույնիսկ, եթե դուք բողոք եք ներկայացրել Քաղաքացիական Իրավունքների խախտման համար: Եթե դուք ունկնդրություն պահանջեք նախապես, մինչև մարզի ընդունած որոշումը ուժի մեջ մտնելը, ապա դուք կշարունակեք օգնություն ստանալ մինչև ունկնդրության վերջնական որոշում կայացնելը:

Ունկնդրություն պահանջելու համար՝

Հեռախոսով՝ խնդրում ենք հեռաձայնեք (800) 952-5253: Այս համարը հաճախակի զբաղված է:
Փոստով՝ լրացրեք Վելֆերի գրասենյակից ստացած ցանկացած Գործողության Ծանուցում (նամակի) հետևի կողմը կամ կարող եք նամակ գրել (պատճեն պահեք), և ձեր պահանջը Բողոքարկման և Նահանգային Ունկնդրության համար ուղարկեք՝ Appeals and State Hearings, P.O. Box 18890, Los Angeles, CA 90018

Լրացուցիչ տեղեկություններ Քաղաքացիական Իրավունքների և Նահանգային Ունկնդրության վերաբերյալ կարող եք ձեռք բերել Շրջանային/Վարչական Բաժանմունքների ընդունարաններում: Հարցրեք Ձեր Իրավունքները Կալիֆոռնիայի Վելֆերի Ծրագրի Ներքո (PUB 13) Նահանգային գրքույկի մասին, որը կարող եք գտնել բոլոր ընդունարաններում:

Instructions

- To be given and explained to applicants/participants at time of application and recertification/redetermination or mailed to applicants/participants if a face-to-face contact is not required.
- Filing/Retention – Not Applicable